

04.02.2016

Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները.

ՕՐԱԿԱՐԳ

1. 2015-2016 ուստարվա առաջին քննաշրջանի արդյունքների ամփոփում (Ձեկուցող՝ Վ. Ալեքսանյան):
2. 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը (Ձեկուցող՝ Վ. Ալեքսանյան):
3. 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի համար անվանական կրթաթոշակի նշանակում (Ձեկուցող՝ Վ. Ալեքսանյան):

ԼՄԵՅԻՆ՝ զեկույց ներկայացնելով օրակարգի առաջին կետի վերաբերյալ՝ ֆակուլտետի ղեկան պ.գ.թ. Վ. Ալեքսանյանը խոսեց քննաշրջանի կազմակերպական աշխատանքների և ընթացքի մասին: Նշվեց, որ ձմեռային քննաշրջանի ընթացքը եղել է պատշաճ կազմակերպված և գտնվել է ղեկանատի մշտական ուշադրության կենտրոնում: Դեկանը ընդգծեց, որ տարեցտարի բարձրանում է ստուգարքներին և քննություններին ուսանողների պատրաստվածության մակարդակը: Դա բացատրվում է նրանով, որ տվյալ առարկայի նյութը մաս-մաս յուրացնելով, կիսամյակի ընթացքում պարբերաբար միջանկյալ քննություններ հանձնելով, ուսանողը եզրափակիչ քննությանը ներկայանում է պատշաճ զիտելիքներով:

2015-2016 ուստարվա ձմեռային քննաշրջանին մասնակցել է 327 ուսանող: Գերազանց առաջադիմությամբ աչքի է ընկել 36 ուսանող, որոնք փայլել են իրենց ակադեմիական մակարդակով՝ բավարարելով քննող դասախոսների ամենախիստ պահանջները:

Դրան զուգահեռ ֆակուլտետի հինգ մասնագիտությունների գծով /66 ուսանող/ քննաշրջանը փակել են ակադեմիական պարտքերով: Դրանց մի զգալի մասը անբավարար պատրաստվածության պատճառով չի ներկայացել ստուգարքներին և քննություններին: Մի մասը անբավարար է ստացել ընթացիկ քննությունների արդյունքներով: Ընդհանուր գծերով ակադեմիական պարտքերի պատկերը ըստ մասնագիտությունների հետևյալն է.

Պատմություն -- պարտք ունի 18 ուսանող,

Մանկավարժություն և հոգեբանություն -- պարտք ունի 7 ուսանող,

Ֆրանսերեն լեզու -- պարտք ունի 5 ուսանող,

Անգլերեն լեզու -- պարտք ունի 19 ուսանող,

Հայոց լեզու և գրականություն -- պարտք ունի 17 ուսանող:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կ.գ.թ. Ս. Խաչատրյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.դ. Ա. Ներսիսյանը, Ա. Մարդանյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, Ս. Սարգսյանը, Ա. Խոջոյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Սարհատյանը Ա. Զուրաբյանը, Դ. Քոքոբեյյանը:*

*ՈՐՈՇԵՑԻՆ՝ 2015-2016 ուստարվա առաջին քննաշրջանի արդյունքները համարել բավարար:*

*ԼՄԵՑԻՆ՝ խոսելով օրակարգի երկրորդ կետի մասին՝ զեկուցողը հանգամանալի ներկայացրեց 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը: Առաջին հերթին նա ներկայացրեց ֆակուլտետի դասախոսների 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական բեռնվածությունները: Անդրադարձավ իրականացված վերանայումներին, որոնց հետևանքով մի շարք դասախոսների առարկայական բաշխվածություններում և դրույքաչափերում տեղի են ունեցել փոփոխություններ: Մասնավորապես նշվեց, որ Օտար լեզուների ամբիոնի դասախոս Ֆիլիպ Փոլադյանը դիմումով ազատվել է աշխատանքից: Նրա ուսումնական բեռնվածությունը վերաբաշխվել է նույն ամբիոնի դասախոսներ Նարինե Գասպարյանին, Աստղիկ Միմոնյանին: Ֆիզիոլոգիական արձակուրդի է անցել նույն ամբիոնի դասախոս Սվետա Օհանյանը: Նրա ուսումնական բեռնվածությունը վերաբաշխվել է ամբիոնի դասախոսներ Աիդա Մարդանյանին և Թինա Ամիրադյանին: Ավելացվել են վերջիններիս դրույքաչափերը: Փոփոխություններ են կատարվել Օտար լեզուների ամբիոնի դասախոսներ Ռուզան Միրզոյանի, Միրա Կարապետյանի անհատական ուսումնական բեռնվածություններում: Ավելացել են Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոսներ Վիկտորիա Մելիքսեթյանի, Անուշ Մարտիրոսյանի դրույքաչափերը: Մեկ ուսումնական կիսամյակով հրամանագրված՝ Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դասախոսներ Դավիթ Թինոյանը և Արտաշես Ղազարյանը ներկայացվել են երկրորդ կիսամյակի համար վերահրամանագրման համապատասխան ուսումնական*

բեռնվածությամբ: Մասնակի փոփոխություններ են կատարվել Ռուբիկ Մարտիրոսյանի ուսումնական բեռնվածքում: Դեկանը զեկուցեց, որ պատրաստ են երկրորդ կիսամյակի դասատախտակները: Ուսումնական պարապմունքները կվերսկսվեն փետրվարի ութին: Մի շարք կուրսեր այժմ դպրոցներում անցնում են ուսումնական պլանով նախատեսված մանկավարժական պրակտիկա: Նրանք դասերը կվերսկսեն պրակտիկան ավարտելուց հետո, փետրվարի 20-ին:

*ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կ.գ.թ. Ս. Խաչատրյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.դ. Ա. Ներսիսյանը, հ.գ.թ. Դ. Սարգսյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, բ.գ.թ. Ա. Ջուրաբյանը, Դ. Քոբրեկյանը:*

*ՈՐՈՇԵՑԻՆ՝ 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:*

*ԼՄԵՑԻՆ՝* Անդրադառնալով օրակարգի երրորդ կետին՝ զեկուցողը ներկայացրեց այն չափանիշերը, որոնք բավարարելու դեպքում ուսանողը կարող է հավակնել անվանական կրթաթոշակի: Առանձնակի շեշտադրվեց ուսանողի ակադեմիական բարձր առաջադիմությունը և հասարակական ակտիվությունը:

Շառլ Ազնավուրի անվան կրթաթոշակի թեկնածու առաջադրվեց «Անզլերեն լեզու և գրականություն» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի Աննա Սարգսյանը: Ուսանողուհին դրսևորել է հասարակական ակտիվություն և չորս կիսամյակ անընդմեջ ունեցել է գերազանց առաջադիմություն:

Դավիթ Անհաղթի անվան կրթաթոշակի թեկնածու առաջադրվեց Մանկավարժության և հոգեբանության մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողուհի Արուսյակ Գասպարյանը: Ցուցաբերել է գերազանց առաջադիմություն և հասարակական ակտիվություն:

Գրիգոր Նարեկացու անվան կրթաթոշակի թեկնածու առաջադրվեց Հայոց լեզու և գրականություն մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողուհի Մերի Սարգսյանը: Ուսանողուհին ուսումնառության երեք կիսամյակների ընթացքում աչքի է ընկել անառարկելի բարձր առաջադիմությամբ և պատշաճ հասարակական ակտիվությամբ: Վայելում է ընկերների և դասախոսների համակրանքը:

Վազգեն Սարգսյան Անվանական կրթաթոշակի թեկնածու առաջադրվեց Պատմություն մասնագիտության երկրորդ կուրսի ուսանող Մհեր Բայրամյանը: Ուսանողը երեք կիսամյակ անընդմեջ գերազանցիկ է և ունի բարձր հասարակական ակտիվություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Կ.Գ.Թ. Ս. Խաչատրյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.դ. Ա. Ներսիսյանը, մ.գ.թ., դոցենտ Վ. Բրուտյանը, Ս. Սարգսյանը, Ա. Խոջոյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Ա. Սարհատյանը, Բ.Գ.Թ. Ա. Զուրաբյանը, Դ. Քոքոբեյլյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ մասնաճյուղի գիտական խորհրդի քննարկմանը ներկայացնել Հումանիտար գիտությունների ֆակուլտետից առաջադրված անվանական կրթաթոշակի ներքոհիշյալ թեկնածուներին.

- Աննա Սարգսյան՝ Շառլ Ազնավուրի անվան կրթաթոշակ
- Արուսյակ Գասպարյան՝ Դավիթ Անհաղթի անվան կրթաթոշակ
- Մերի Սարգսյան՝ Գրիգոր Նարեկացու անվան կրթաթոշակ
- Մհեր Բայրամյան՝ Վազգեն Սարգսյանի անվան կրթաթոշակ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վ. Ալեքսանյան

Ս. Խաչատրյան